Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1
26.01.2026թ.-ին կնքված թիվ PDU-49-01-26
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան 05 **.08.2026թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2026թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/222-26 Լիազորագրի հիման վրա և ՀՀ վարչապետի աշխատակազմը (Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը) (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 26.01.2026թ.-ին կնքված թիվ PDU-49-01-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 6 880 000 (վեց միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 8 870 000 (ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 26.01.2026թ.-ին կնքված թիվ PDU-49-01-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝	**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
«Հայփոստ» ՓԲԸ	ՀՀ վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5	ք.Երևան, 0010, Հանրապետության
ՀՎՀՀ՝ 02507464	հրապարակ,Կառավարական տուն 1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 02505554
Հ/Հ՝ 1930003703156000	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հեռ.՝ (010) 544-444	ՀՀ՝ 900011023984
Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և	Հեռ.՝ (060) 515-691
վաճառքների զարգացման վարչության	Գործերի կառավարիչ՝
ղեկավար՝	
---------- Գուրգեն Բաղդասարյան	---------- Գարիկ Բոշյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.